

183-
ԻՐԱՆԵՐ—ԱՇԽԱՏԱՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵ. ԳԻՆԶԻՆԻՐԿ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ
Ա. Կ Տ Ի Վ Ի Հ Ե Տ

Գ Ե Տ Հ Ր Ա Տ

1 9 3 2

Յ Ե Ր Ե Վ Ա Ն


-183-

14 SEP 2017

ՊԻՐԵՐ—ՍՇԽԱՏԱՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵ. ԳԻՆԶՐՈՒՐԳ

ԱՇԽԱՏԱՆԻԸ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ
ԱԿՏԻՎԻ ՀԵՏ



Քարզմ. թուրքյան

մթ. Ա. Ղազարյան

Պետերատի տպարան
Դիպլիտ 6998 (ք)
Պատվեր 6485
Հրատ. 1950
Ցիքած 2000



1-27989բ

Մեր յերկրում նորն որըստորե աճում ու
ամրանում ե: Սոցիալիզմի սկսված դարաշրջ-
նանը նոր խնդիրներ ե առաջադրում յերկրին,
պահանջում ե մի շարք արմատական փոփո-
խություններ:

Նոր ձևով ե դրվում նաև դաստիարակու-
թյան խնդիրը:

Յուրաքանչյուր շրջանային աշխատալոր,
վորը քիչ շատ բան ճաշակել ե թեորիայից,
գիտե, վոր դիալեկտիկայի հիմնական դրու-
թյուններից մեկն այն դրությունն ե, թե «ա-
մեն ինչ հոսում ե, ամեն ինչ փոխվում ե, և
վոչինչ չի մնում անշարժ»:

Մենք, վոր ցանկանում ենք լինել իսկա-
կան լենինիստ-մարքսիստ, պետք ե մեզ համար
պարզենք հիմնական տեսակետը շրջապատի
վերաբերմամբ, վորպես մշտական շարժման
մեջ գտնվողի:

Ապացույցներ, որինականե՞ր. նրանք հա-
զարներով կան:

Նայեցե՛ք մեր յերկրին: Հիշեցե՛ք 1918—
1919 թվերը և համեմատեցե՛ք այդ թվերը 1931
թվի հետ: Ձեզ պարզ պատկերացրե՛ք ձեր շրջ-
նանը: Թափանցեցե՛ք ձեր Փարրիկայի, կոլ-
տնտեսության կյանքի ներսը:

Դուք կտեսնեք, թե ինչպես այդ թեորե-
տիկ դրուժյունը յուրաքանչյուր ուր, յուրա-
քանչյուր ժամ վեր եւ ածվում կենդանի, ակըն-
բախ իրականութեան:

Դիտեցե՛ք, թե ինչպես ե կատարվում մեր
ժողովրդական տնտեսութեան հնդամյա պլա-
նը, վոլից վորոշ մարդիկ վախենում եյին,
վորին աջերը տապալումն եյին մարդարեւա-
նում. համեմատեցե՛ք այդ այն բանի հետ, թե
ինչպես ե նա իրականանում առանձին ֆաբ-
րիկայի, խորհտնտեսութեան կողմից—դուք
կտեսնեք բացի այդ շարժումից, նաեւ այդ
ուղղութեան հիմնական դիժը—դեպի վեր, ա-
վելի բարձր ու վեր, դեպի ստեղծումն իսկա-
կան սոցիալիստական հասարակութեան:

Նայեցե՛ք պատանիների կոմունիստական
շարժման վրա: Հիշեցեք 1926-27 թվերը եւ հա-
մեմատեցեք այն այսօրվա հետ:

Այն ժամանակվա ծանր, վորոշ տեղերում
ուղղակի ճղնաժամային բնույթ կրող դրու-
թեանը փոխարինեց միանգամայն բացահայտ
վերելք: Այդ վերելքն ամենից առաջ ուղայմա-
նավորվում ե նրանով, վոր նա ստեղծվել ե
պատանիների սոցչինարարութեանը մասնակ-
ցելու ամուր բազայի վրա: Կազմակերպու-
թեանը փոխարինեց միանգամայն բացահայտ
ցումն՝ ապահովում ե նրա ամրութեանն ու ա-
ռողջութեանը:

Ճիշտ ե, չի կարելի գործերը պատկերաց-

նել այնպես, վոր իբր թե «Շիպկայում ամե-
նայն ինչ հանդիստ ե»:

Շրջադարձը դեռ չի ավարտված, ինչպես
յուրաքանչյուր շրջադարձի ժամանակ, ճորն-
չում են կազմակերպութեան մեխանիզմի դեռ
վոչ այնքան բարդ մասերը: Բայց հիմնակա-
նում նա կատարված ե, վորովհետեւ այժմ սոց-
կառուցման մասնակցելու աշխատանքների հա-
ջողութեաններով են չափվում ամբողջ կազ-
մակերպութեան նվաճումներն ընդհանրապես,
եւ նրա յուրաքանչյուր ողակինն առանձնա-
պես:

Կազմակերպութեանը դեռ եւս ընդհուպ չի
մոտեցել ամբողջ բանվորաշրջադարձի կան
րեխաներին սոցիալիզմի շինարարութեան մեջ
ներգրավելու աշխատանքին: Դպրոցի պոլի-
տեխնիզացիայի համար մղվող պայքարը դեռ
հարկավոր չափով չի ծավալվել, ամբողջ պի-
ոներական աշխատանքի վորակը դեռ բավա-
րար չափով բարձր չե:

«Շիպկայում դեռ եւս հանդիստ չե», կա-
րող ենք ասել մենք:

Բայց այժմ—այսօր շարժման հիվանդու-
թեաններն այն չեն, ինչ եյին յերկու-յերեք
տարի առաջ:

Հիմնական զանազանութեանն այն ե, վոր
այժմյան դժվարութեանները, հակառակ ան-
ցյալի դժվարութեանների, ամման հիվան-
դութեաններ են, եւ վոչ թե անկումի: Յեւ այս-
տեղ ել, շրջապատի այդ մշտական շարժման
պրոցեսն իրեն զգացնել ե տալիս:

Այդ փոփոխութիւնները, տեղաշարժերը, վորոնք տեղի յեն ունենում կազմակերպութեան մեջ, ղեկավարութեան առաջ նոր, պատասխանատու խնդիրներ են դնում:

Պիտներ կազմակերպութիւնը պետք է դաստիարակի նոր մարդուն:

Նա պետք է պատմաստի նրան սոցիալիստական հասարակութեան համար անհրաժեշտ հատկութիւնները (կոլլեկտիվիզմ, աշխատանքային դիսցիպլինա, կողմնորոշվելու կարողութիւն, հեռանկար տեսնելու և հասկանալու կարողութիւն, խտերնացիոնալիզմ, հակակրօնականութիւն): Հատկապես այդ հատկութիւններով կարելի յե դաստիարակել միայն այն ժամանակ, յերբ իրենք՝ յերեխաներն անմիջապէս մասնակցութիւն կունենան սոցիալիզմի գործին, իրենք մասնակից կլինեն այն մեծ կռուցմանը, վորը յեռում է յերկրում: Այդ խնդիրների տեսանկյունով ել փոփոխվում են և ղեկավարութեան խնդիրները:

Ի՞նչ անելու և ի՞նչ չափով անելու հարցն արդեն հանդիսանում է միակ հարցը պիտներների սոցիալարարութեան մասնակցելու գործում:

Հերթական հարցը—պայքար անցկացվելիք աշխատանքի վորակի համար: Հիմնականը—կարողանալ պատասխանել այն հարցին, թե ի՞նչպէս կարելի յե ավելի լավ անել, ի՞նչպէս կարելի յե կազմակերպել աշխատանքը:

Պիտներ բյուրոն պետք է կարողանայ պատասխանել այն հարցերին, թե ի՞նչպէս ավելի լավ է կազմակերպել յերեխաների մասնակցութիւնը սոցիալարարութեան այս կամ այն բնագավառում, ի՞նչպէս բարձրացնել անցկացվելիք աշխատանքի վորակը: Նա պետք է կարողանա յարբեր—տարբեր պատասխանել «Ի՞նչպէս աշխատել» հարցին (ջոկատի աշխատանքը մետաղագործական արդյունաբերութեան մեջ, տեքստիլ արդյունաբերութիւնում, ջոկատի աշխատանքն անասնաբուծական, հացահատիկային և կամ բամբակագործական շրջաններում):

Պիտներների շրջանային բյուրոն—կազմակերպութեան ստորին աշխատանքի մասնաշաղկան և կոնկրետ ղեկավարութեան գործում «կենտրոնական դեմքը»—բառացիորեն չի կարողանա աշխատել, յեթե չյուրացնի այս խնդիրները:

Խոսելով պիտներկազմակերպութիւնը ղեկավարելու և նրա բարելավման անհրաժեշտութեան մասին, մենք չենք կարող չխոսել այն մասին, թե ի՞նչպէս պետք է ղեկավարել յերեխաների ստեղծագործութեան և նախաձեռնութեան մեր ունեցած ռեզերվները, ի՞նչպէս մօբիլիզացիայի յենթարկել պիտներ կազմակերպութեան այդ, իր տեսակի, «ներքին ռեսուրսները»՝ կատարելու համար Պ. Կ. Կ. բյուրոյի առաջ դրված խնդիրները—ջոկատների ընդհանուր ղեկավարութիւնը, և առա-

ըին հերթին մեթոդիկ ղեկավարութեանը, բա-
րելավելու գործում:

ՊԱՏՐԱՍՏԵԼ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԱԿՏԻՎ

Յերեսանների ինքնագործունեությունը և
պատանեկական ակտիվի հարցը նոր հարց է:

Ցավն այն է, վոր կոլմարների հիմնական
մասսան և հասկապես Պ. Կ. Կ. բյուրոն վատ
են յուրացրել այն, վոր յերեսանների ինքնա-
գործունեությունը—հիմնական ողակ է կո-
մունիստական դաստիարակութեան գործում,
վոր նա՝ այն սկզբունքն է, վորի հիման վրա
կառուցվում է մեր կազմակերպությունը և վոր
առանց նրա՝ յերեսանների սոցիալոգիական մաս-
նակցություն հարցի դրույթը—վոչ մի բանի
պետք չեկող դատարկություն է:

Այստեղից արվում է այն յեղրակացու-
թյունը, վոր պետք է աշխատել պատանեկա-
կան ակտիվի հետ, վորովհետև, վերջին հաշ-
վով, ակտիվն է վճռում յերեսանների ինքնա-
գործունեությունը դարգացման հարցերը:

Ընդունված է խոսել պատանեկական ակ-
տիվի հետ աշխատելու անհրաժեշտություն
մասին.—վորոչ տեղերում փորձեր են արվում
ակտիվի հետ աշխատելու բաղաններում. կան
հիանալի փորձեր (ճիշտ է, հազվադեպ) շրջա-
նային բյուրոներին կից յերեսանների շտաբներ,
թեթև հեծելազորի խմբակներ—կազմակերպե-
լու—առանձին հարվածային առաջադրանքներ

կատարելու համար: Բայց ամբողջ Միութեան
մեջ չկա այնպիսի շրջաբյուրո, ուր աշխատան-
քը պատանեկական ակտիվի հետ սխառեմի վե-
րածված, ամենորոյա գործ լիներ, ուր ինքը՝
կոմիտեն և բոլոր կոմսոմոլիստները բյուրոյի
աշխատանքը գնահատեյին՝ յեղակետ ունենա-
լով այն՝ թե վո՛րքան է նա ղեկավարում յերե-
սանների ակտիվությունը, թե վո՛րքան նա
պլանաչափ է ծավալում աշխատանքը պատա-
նեկական ակտիվի հետ:

Մինչդեռ հարցն արդեն հասունացել է:
Յերեսանների ամող հետաքրքրությունը, նրանց
ակտիվության ժակարդակի բարձրացումը՝
վորակավորված ղեկավարություն են պահան-
ջում: Շարժման ներկա ետապում չի կարելի
յերեսանների ակտիվությունը ղեկավարել տա-
րեկան մի քանի անգամ հրավիրվող խորհրդ-
դակցություններով:

Այժմ պատանեկական ակտիվի հետ հար-
կավոր է սխառեմատիկ կերպով անցկացվող աշ-
խատանք:

Այժմ հարկավոր է, վոր շրջաբյուրոները
մշտական, ծրագրված կերպով ոգնեն պատա-
նեկական ակտիվին, կարողանան նրանց վրա
ներգործող վատ ազդեցությունների ելություն-
նը հասկանալ և սոփոքեցնել նրանց՝ պայքարե-
լու այդ ազդեցությունների դեմ:

Վերջին ժամանակներս, յերբ հարվածային
խնդիրը հանդիսանում է պիոներների մասնակ-
ցությունը սոցիալոգիական, պիոներական աշ-

խատալորների շարքերում այն տեսակետը կա-
թե՛ կազմակերպութեան բալոր մյուս խնդիրնե-
րը խաղաղ կերպով մահացան «առանց այդ մա-
սին տեղեկացնելու ծանոթներին ու բարեկամ-
ներին»։ Մեռածների թվին նրանք վերագրում
են նմանապես աշխատանքը օլիոներակտիվի
հետ։ Իրականում՝ այդ «հանգուցյալները» բո-
լորովին կենդանի չեն։ Վորովհետեւ մեր հիշա-
տակած խնդիրների թերզանահատութեան մեջ
թաղնված են մեր աշխատանքն արգելակող այն
պիտի փաստեր, ինչպիսիք են վազք թվերի հե-
տեվից և ստեղծածի նպատակը տեսնելու ան-
կարողութիւնը։

Յեւ տյտեղ առաջատար և հանդիսանում
մեկ հարց՝ դարձե՞լ և արդէ՞ր ակտիվը «կազ-
մակերպութեան տերը»։

Ձեռքտանքում, վորպես կանոն, ակտիվ չեն
աճեցնում։ Ավելին. ակտիվը, վոր յուրաքան-
չյուր տվյալ մոմենտում կոնկրետ աշխատան-
քով զբաղված չե և սլատասխանատու չե վորոշ
գործերի համար, աստիճանաբար վերածվում
ե պասսիվի, վորը և՛ «գործից չի խուսափում»,
և՛ բան ել չի անում»։

Այժմ դործը միայն նրանում չե, վոր պա-
տանի ակտիվիստների հետ, նրանց համար
կենդանի ու գրավիչ աշխատանք տանենք ա-
ռանձնացրած ձևով։

Այդ ել և անհրաժեշտ, բայց արդեն անբա-
վարար ե։ Հարկավոր ե պայքարել ակտիվի
հետ տարած աշխատանքի բովանդակութեան

ու վորակի համար։ Ձեռքտանքի աշխատանքի բո-
լոր խնդիրները պետք ե միաձուլել մեկ գլխա-
վորագույն խնդրի հետ. — ոգնել պիոներներին
դառնալու իրենց կազմակերպութեան իսկական
տերերը, վորպետղի նրանք ավելի լավ ու ար-
դյունավետ կերպով ոգնեն բանվոր դասակար-
գին սոցիալիզմ կառուցելու գործում։

Ձեռքտանքում ակտիվի դաստիարակման աշ-
խատանքների ստորաբաժանումն ու կարգավո-
րումը և շրջյուրոնների անմիջական ղեկավա-
րութիւնը՝ ամենից ավելի հնարավոր են դարձ-
նում կոմսոմոլիստների ոգտագործումը՝ դե-
կամարելու համար աշխատանքի առանձին ո-
ղակները։

Յեւ կոմսոմոլիստական միջուկն ել, դառ-
նալով ակտիվի բաղադրիչ մասը, դադարում ե
ինչ վոր ոտար բան յինելուց ակտիվում։ Կոմ-
սոմոլիստները կհանդիսանան ընդհանուր ջո-
կատային ակտիվի անհրաժեշտ ու գլխավորող
բաղադրիչ մասը։ Ձեռնարկել պատանեկական
ակտիվի նախապատրաստման գործին, ակտի-
վը դարձնել կազմակերպութեան տերը — սա
հարկածային որակարգից չհանվող խնդիր ե։

ԻՆՉԻՅ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՍԿՍԵԼ

Շրջանային բյուրոները, պատանեկական
ակտիվի հետ աշխատանք տանելու բնագոյա-
ռում, հաղվաղեպ բացառութեամբ, վոչինչ չեն
անում։ Ի՞նչպես մոտենալ աշխատանքի կազ-
մակերպմանը։ Ի՞նչից սկսել։

Անհետացած թիւն կլինէր սկսել պատանեկական ակտիվի հետ աշխատելու առանձին պլաններ կազմել: Այդ աշխատանքը չըջանային բյուրոյի աշխատանքների ընդհանուր պլանի բաղադրիչ մասը պետք է կազմի: Կազմակերպչական միջոցառումները, վորոնք պետք է չըբյուրոն անցկացնի պատանեկական ակտիվի հետ ստարած աշխատանքում, պատանեկական ակտիվի ուսուցումը, ակտիվի հետ աշխատանքների ծախսումն ակումբներում և չըջանային մեթոդիկ նորոններում, մեծահասակներին այդ աշխատանքներում ներգրաւելը — այդ բոլորը պետք է տեղ գտած լինեն չըբյուրոնների աշխատանքների ընդհանուր պլանում:

Հարկավոր է պատանեկական ակտիվի հետ աշխատելու ուղիները սահմանել: Այդ ուղիները հետեյալներն են՝

1. Բաղայի ակտիվի դեկավարութիւնը:

Սրան վերաբերում են ողակաւարների և ամբողջ խորհրդի աշխատանքները, բրիգադիւնների և կուլտմասկազմակերպիչների աշխատանքները, գլարճարարութիւնը (защитничество) ջոկատի խորհրդի, վորպես ողակների դպրոցի աշխատանքը, ջոկատային և բաղային հարցերը, կուրսերի հարցերը, սեմինարները:

2. Ակտիվի դեկավարութիւնը չըջանում:

Սրան վերաբերում են — չըջանային և վինջային բրիգադների, շտաբների, թեթև հեծելազորի ջոկատների աշխատանքները, պատանեկական կոնֆերենցիաները, խորհրդակ-

ցութիւնները, մրցականները և մասսայական աշխատանքի ուրիշ ձևերը, ակտիվի նախապատրաստման հարցերը, նրա ուսուցումը (դասընթացներ, ճյուղային սեմինարներ):

Ամբողջ աշխատանքը պատանեկական ակտիվի հետ չի կարելի և չպետք է առանձնացնել սոցիալաւցման մասնակցութիւնն այն խնդիրներին, վորոնք լուծվում են կազմակերպութիւն կողմից: Ընդհակառակը, հատկապես այդ բնադախտներում յերկխաներին պետք է ամբաւորնել և աշխատանքի փորձից դասեր քաղել, ավելի աղաջ դնալու համար:

Սխանդամայն պարզ է, վոր այժմ Պ. Կ. Կ. բյուրոյի տաւ աշխատանքի հիմնական հարցերը հանդիսանում են. — քաղաքում՝ ի՞նչպես ավելի լավ կազմակերպել արտադրական ջոկատի աշխատանքն արտադրութիւնն ողնելու և յերկխաների մասնակցութիւնն արտադրողական աշխատանքում կարգավորելու համար, միաժամանակ բարձրացնելով այդ աշխատանքի վորակը գյուղում՝ ի՞նչպես կազմակերպել խորհանտեսական — կոլտնտեսական ջոկատների դաստիարակութիւնն աշխատանքը, միաժամանակ լուծելով ջոկատի՝ կոլտնտեսութիւնն ողնելու աշխատանքի խնդիրը:

Թե՛ գյուղում և թե՛ քաղաքում — դպրոցն ի՞նչպես պոլիտեխնիկական դարձնել, ի՞նչպես նրա աշխատանքի սխտեմը, մեթոդն ու կազմակերպչական ձեւերը համաձայնեցնել պիտներական աշխատանքի բովանդակութիւն հետ:

Անհրաժեշտ է հիշել, վոր բոլոր այդ հարցերը սեղմ ձևակերպում են կաղմակերպության խնդիրների «աջը», վոր հատկապես նրանց շուրջը. նրանց հիման վրա, պետք է ծավալել ամբողջ աշխատանքը պատանեկական ակտիվի հետ, չհեռացնելով նրան շարժման ընդհանուր խնդիրներից:

Ինչի վրա էլ վոր աշխատի չըջանային կաղմակերպությունը—լինի դա իր վրա «վեցի դաշնագրով» վերցրած պարտավորությունները (Մոսկվա, Լենինգրադ, Ուկրայինա, Ուրալ, Իվանո-Վոդնեսենսկ, Հյուս. Կովկաս), կատարումն, Գործադիր Կոմիտեյի առաջադրանքների կյանքի մեջ կիրառումն, կամ բայելեկիյան ցանքսին մասնակցելը և այդ հանդուցային խնդիրներն անխուսափելիորեն կկանգնեն նրա սրտը և պետք է լուծումն ստանան:

Ահա թե ինչու պատանեկական ակտիվի հետ տարվող աշխատանքը պատկերացնել, ինչպես այդ հաճախ լինում է, վորպես դասընթացներ պլանաւարանների կամ ողակավարների հետ տարվող աշխատանքը պատկերացնել նեկական ակտիվի հետ աշխատանքը պետք է հագեցնել այդ հանդուցային խնդիրների կոնկրետ բովանդակությամբ:

ԻՆՉՊԵՍ ՂԵԿԱՎԱՐԵԼ ԲԱԶԱՅԻ ԱԿՏԻՎԸ

Խորհուրդը հանդիսանում է ջոկատի կոլեկտիվ ղեկավարը: Բայց ասել միայն այդ դա նշանակում է հարցի միայն մի կողմը լու-

սարանել: Խորհուրդը նաև պետք է հանդիսանա վորպես ողակավարների դպրոց: Նրա այդ նըշանակությունը շատ մեծ է ու արժեքավոր և հենց այդ էլ, դժբախտաբար, ամենից ավելի քիչ է իրականանում:

Իրականում խորհուրդը վորոշում ու ջոկում է աշխատանքը և նրա կատարման համար մոտեցում է սահմանում: Աշխատանքի հիմնական կատարողը, նրա բուն վորական կոլեկտիվը ողակն է: Խորհուրդում ողակավարին չբացատրել, թե ի՛նչպես պետք է կատարել այն աշխատանքը, վորը հանձնարարված է նրա ողակին, կամ հենց ինքն ողակն է նախաձեռնել կատարել, ողակավարին ցույց չտալ, թե ի՛նչ միջոցներով ավելի լավ է մոտենալ այդ աշխատանքի կատարմանը—նշանակում է, տապալման յենթարկել առաջադրանքների կատարման գործն ողակի կողմից, նշանակում է, ողակի ամբողջ աշխատանքը կործանել:

Ինչո՞ւմն է այստեղ խոչընդոտը: Նա անպայման նրանումն է կայանում, վոր, ջոկատների խորհուրդները չեն կարողանում իրենց աշխատանքում մեծահասակների ուժերն ոգտագործել, վոր ջոկատների կոլվարները խորհրդի նշանակությունն անբավարար են յուրացրել, վոր ողակավարները նույնպես չեն կարողացել ընդհուպ մոտենալ այդ խնդիրներին:

Ջոկատների կոլվարների հրահանգչական ուժինարներ հրավիրեցեք, վորոնք հատկապես

նախընտրեալ լինեն խորհրդին՝ վորպէս ողակա-
վարներ զպրոցի: Սեմինարներում վոչ մի աշ-
գարացիներ՝ ալ և վորոշ թեմաների շուրջը
գործնական պարապմունքներ կազմակերպեցեք
կողմարների հետ:

Հաշվի առեք, վոր ալ չհարցերում խոշոր
դեր կխաղան մասնագետների և ծնողական
հասարակացութեան ներգրաւումը: Այդ սե-
մինարներում ցույց տվեք, թե կարելի ի՞նչ
պէս ավելի լավ նրանց կներգրաւի: Այդ սեմի-
նարներում մանրամասն կերպով վերլուծեցեք,
թե ի՞նչ և նշանակում խորհուրդը— վորպէս
ողակալարների դպրոց— հասկացողութեանը,
և դրանից ի՞նչ ոգուտ կա յուրաքանչյուր ողա-
կին ու ամբողջ ջոկատին:

Յերբ ալ, ըստ ելութեան նախնական աշ-
խատանքը կատարված է, կազմակերպեցեք
խորհուրդի նախագահների սեմինարներ,
նորից խորհուրդը, վորպէս ողակալարների
դպրոց հարցի շուրջը: Սեմինարներն սկսեցեք
հենց իրենց, յերեսաների, իրենց խորհուրդի
մասին արած գրույցներից: Թող իրենք նշեն,
թե խորհուրդներին ալ ինչ խնդիրների կատար-
ման համար ի՞նչ և պահատում, թե ի՞նչպէս ա-
վելի լավ է մտնենալ դրա լուծմանը:

Սեմինարի աշխատանքներում առանձին
կանգ առեք խորհրդի հրահանգչական աշխա-
տանքի դրվածքի և նրա ավելի լավ կազմա-
կերպման վրա: Գործնական պարապմունքներ
անցկացրեք (հրահանգչական խորհուրդ):

Վերցրեք, որինակի համար, ջոկատի պաշ-
քարն իր աշխատանքներում պոլիտեխնիզմ
կիրառելու համար: Թող իրենք, սեմինարի
մասնակիցները, ցեխերում անմիջական աշխա-
տանք տանեն հայտարերելու աշխ, թե ինչպիսի
կարելի չէ յերեսաների աշխատանքը ցեխում
կիրառել կամ թե ինչպէս կարգի բերել իրենց
աշխատանքը գործարանի արհեստանոցներում:
Թող իրենք հայտարերեն աշխատելու տեղերը,
աշխատանքի տեսակները և հաշվի առնեն վար-
պետների հրահանգելու հնարավորութեանը:
Արդեն գրանից հետո իրենք կարող կլինեն բա-
ժանվել բրիգադների և կազմակերպել աշխա-
տանքը ցեխերում: Ջոկատների կողմարների և
խորհրդի նախագահների ալ պոլիտեխնիզմա-
կան նախապատրաստութեանը կստեղծի խոր-
հուրդն ողակալարների դպրոցը դարձնելու
անհրաժեշտ նախադրյալները:

Այն յերեսաները, վորոնք սովորում են
նախադասների սեմինարում, վոչ մի դեպքում
չպետք է անտես առնվեն շրջապատների տեսո-
ղութեան դաշտից: Նրանք պետք է կազմեն
աշխ միջուկը, վորն իր ստացած դիտելիքներն
ողտադործում և վոչ միայն իր խորհրդի աշ-
խատանքների վերակառուցման համար, ալ և
կոչնի մյուս ջոկատների վերակառուցմանը:

Շրջապատի կազմակերպչական բրիգադը
պետք է կազմված լինի յերեսաներից: Նա իր
խնդիրը պետք է արձակագրել ջոկատներին՝
աշխատանքի կազմակերպման և նրա գրութեան

1-279894



ստուգման հարցերում: Յեղ առաջին հարցը, վորով բրիգադը պետք է գրադվի, անկասկած պետք է լինի այն հարցը, թե ի՞նչպես խորհուրդը ողակավարների գարոց դարձնել: Իր պարագմունքներում կոմիսիա բրիգադը, չըջրյուրոյի կողմից ուղարկվելով տարբեր ջոկատներ, իր աշխատանքի փորձով կոչնի այդ ջոկատներին, բրիգադի յուրաքանչյուր անգամ իր ջոկատում կատարած աշխատանքի արդյունքով ձեռք բերած նվաճումների փոխանակությունը կկատարի այդ ջոկատներում, պատմելով, ցուցադրումներով քայլ առ քայլ, այս կամ այն ջոկատում կիրականացնի խորհրդի, վորպես ողակավարների գարոցի, համար մղվող պայքարը, հարկավոր է զգուշանալ հնարավոր «կոմիսարացումից» (закомиссарования):

Զե՞—վոր պատահում են այնպիսի դեպքեր, յերբ չըջրյուրոյից ուղարկված պիտներ ակտիվիտեն սկսում է անխնա քննադատել ջոկատի աշխատանքը: Այդ բանը չի կարելի թույլ տալ: Շըջրյուրոն պետք է ակտիվիտեններին հասկացնի, վոր մեզ հարկավոր է այնպիսի քննադատություն, վորն ընդդէի մեր պակասությունները միմիայն նրանց ուղղելու համար, կոնկրետ կերպով սմանդակելով նրանց վերացմանը:

Մի նկատողություն ես:

Չպետք է կարծել, վոր ինքը չըջրյուրոն պետք է անսլայման գրադվի ողակավարների և խորհուրդների նախագահների նախապատրաս-

տությամբ: Իսկի ել յե: Փնջային միավորումը, վորի ջոկատներն ըստ արտադրության ալիւի մոտ են մեկը մյուսին, վորը կապակցված է մի շարք միանման աշխատանքների կատարումով, ամենից ավելի լավ կարող է այդ դործը կատարել:

Փնջային միավորումը փրկում է սեմինարին այն ծանրաբեռնվածությունից, վորը կըստացվեր, յեթե վերջինս չըջանային լինել: Շըջանային բյուրոյի պարտականությունն է փնջային սեմինարներին սպասարկել մեթոդիկ դեկավարությամբ, այդ դործի համար ներգրավել մանկավարժների և մանկախնայիկումների ուսանողության ուժերը:

Միայն թե պետք է թույլ չտալ, վոր սեմինարը ներփակվի միմիայն իր փնջի չըջանակներում: Փորձի բաղմակողմանի փոխանակությունը միանգամայն անհրաժեշտ է:

Շըջանային բյուրոյի պարտականությունն է նաև բրիգադների, սեմինարների և չըջանում գտնվող բոլոր փնջերի հանդիպումներ կազմակերպել, վորի նպատակը պետք է լինի նշել թե՛րությունները և ցույց տալ հետագա աշխատանքների ուղիները:

ՈՂԱԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ջոկատային ակտիվի հիմնական մասը կազմում են ողակավարները:

Հաճախ (յեթե վոչ միշտ) ողակի յերեխաները հենց իրենց ողակի աշխատանքը չափում են ողակավարի վորակով:

Լալ ողակային—լալ ողակ—լալ աշխատանք
Յուրաքանչյուր ողակ կարիք ունի լալ
դեկավարի:

Միայն թե, վո՞րտեղից ճարել այդպիսին:
Ի՞նչպես յուրաքանչյուր շարքային ողակավա-
րին լավ դարձնել: Այդ հարցերը ասանջում են
ջոկատներին, ասանց շրջանային բյուրոյի ղե-
կավարութեան, նրանք այդ հարցերը լուծել չեն
կարող:

Շրջաններում սահմանեցեք ողակավարներին
մշտապես գործող փնջային կամ բաղային պա-
րագմունքներ:

Հաշվի տուեք, վոր այդ պարագմունքները
պետք է ատիճանական բարդացման տարրեր
պարունակեն իրենց մեջ: Նրանք պետք է յերե-
խաներին ամիսի հասարակից ու ամիսի մոտի-
կից ասանեն գեպի ամիսի բարդն ու հեռավորը:
Հաշվի տուեք և այն, վոր, չնայած առաջա-
դրված լուրջ խնդրին, աշխատանքի անցկացու-
մբն այնպիսի կենդանի ձևերով տարվի, վոր
ողակավարները հետաքրքրութեամբ հաճախեն
այդ պարագմունքներին:

Այդ գործի կործանումն անխուսափելի կը-
լինի, յեթե շրջրյուրոններն ինքնավստահ լինեն
և հույս ունենան միայն իրենց սեփական ուժե-
րի և իրենց աշխատակիցների ուժերի վրա: Յեւ
ընդհակառակն, այդ պարագմունքները մեծ
ուգուտ կտան, յեթե նրանց ղեկավարութեան
համար ներգրավված լինեն բանփոքերը, ու-

սուցիչները, կոմսոմոլի աղախիլը և ահումբի
մեծահասակ աշխատակիցները:

Չպետք է կարծել, վոր այդ պարագմունք-
ները կզուգադիպեն խորհրդի պարագմունքնե-
րին: Չե՞—վոր խորհուրդը պետք է ողակավար-
ներին գործնականորեն հրահանգի, նրանց նա-
խապատրաստի ողակում այս կամ այն կոնկրետ
աշխատանքը տանելու համար: Իսկ ո՞վ պետք է
պատասխանի հետևյալ հարցերին, թե ի՞նչպես
կարելի չէ աշխատանքում ողակը լավ կազմա-
կերպել, ինչո՞ւմն է կարգապահութեան հարցի
էությունը, ողակն ինչպե՞ս բանփոքական կո-
չկախի դարձնել, ինչպե՞ս անցկացնել դրույց-
ները, ի՞նչպես կարելի չէ ամբողջ ողակը ներ-
գրավել յուրաքանչյուր անցկացվող գործում:
Խորհուրդը—հաղիվ թե:

Խորհուրդը, ամենաշատը տասն ուրը մի
անգամ հավաքվելով, լուծելով ջոկատային
կյանքի ղեկավարման վերաբերող շատ հար-
ցեր, զուգարած դրան և ողակավարներին հրա-
հանգելը, նա պարզապես չի կարող զրադվել
այն ընդհանուր, բայց շատ ելակյան հարցերով:

Իսկ յեթե զրադվի ել, ուժերի պակասու-
թեան պատճառով, հաղիվ թե կարողանա տալ
այն, ինչ հարկավոր է:

Ամիսը յերկու (մոտավորապես) անգամ
հավաքվելով, այդ պարագմունքները պետք է
ողակավարներին պատասխան տան ողակի աշ-
խատանքների ընդհանուր հարցերին, վորոնք
նրանց անպայման հետաքրքրում են և վորոնք

չեն կարող չհետաքրքրել: Վտանգ և ներկայաց-
նում ալեկորդ թեորիարանությունը, վորը մի-
անգամայն հնարավոր և պարագմունքների առ-
ջնորհք դեկավարման դեպքում: Այդ բանը
թույլ տալ—նշանակում և կործանել պետքա-
կան լավ գործը:

«Ի՞նչպես պետք է»—ի մասին մի անգամ յեր-
կար ու ճանճրալի գրույց լսելուց հետո, յերե-
խաները հաղիվ թե հաջորդ անգամ պարապ-
մունքի գան:

Հարկավոր և լավ կադմակերպել այդ զը-
րույցները, հազեցնել այդ կոնկրետ, փաստա-
ցի բովանդակությամբ, հարկավոր և այտուդ,
պարագմունքների ժամին, առանձին աշխա-
տանքների որինակների վրա՝ ցույց տալ՝ թե
ինչպես պետք է անել այս կամ այն գործը:

ԱՇԽԱՏԱՆԻՔ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Բրիգադիւրները կադմակերպվում են աշխա-
տանքի այս կամ այն բնագավառում՝ հարվա-
ծային աշխատանք տանելու համար:

Որինակի համար, ջոկատն աշխատում և
արտադրության մեջ: Անմիջապես ցեխերում՝
յերեխաներն աշխատում են բրիգադներով: Կո-
մանտության մեջ—ուսումնա—արտադրական
բրիգադներ, ջոկատներում—սիրողների բրի-
գադներ և վերջապես ողակներում—այս կամ
այն աշխատանքն անցկացնող բրիգադներ:

Ակտիվի՞ստ են արգյոք բրիգադիւրները:—
Անկասկած, այո՛: Անհրաժեշտ և մի կերպ կազ-

մակերպել բրիգադիւրների նախապատրաստու-
թյունը, և վորովհետեւ բրիգադներ կարող են
առաջ գալ ըստ հարկավորության և տարբեր
տեսակի աշխատանքների համար, ապա բրի-
գադիւրների համար պետք է կադմակերպվեն
հատուկ ճյուղային ուսուցումներ:

Այս ուսուցումը պետք է իրենից ներկա-
յացնի միատեսակ աշխատանք կատարող բրի-
գադների ժամանակ առ ժամանակ հրավիրվող
հավաքույթ, ուր գրվեն ամենից ավելի հե-
տաքրքիր հաշվետվությունները և հայտարե-
վեն նրանց թերություններն ու նվաճումները:
Այդ խորհրդակցություններին պետք է հրա-
վիրվեն նաև մասնագետներ, նայած թե ինչ
հարցերի վրա յեն աշխատել բրիգադները:

Որինակի համար, քննվում է բրիգադի ցե-
խում տարած աշխատանքի հարցը: Քննության
հրավիրվում են ցեխի վարպետները, բանվոր-
ները, ողակի այն ներկայացուցիչները, վորոնք
դեռ ցեխում չեն յեղել, նույնպես և նշանք, վո-
րոնք աշխատել են տարբեր ցեխերում:

Հայտարարվում է, թե ինչպես են աշխա-
տել բրիգադները, նրանց կադմակերպվածու-
թյան աստիճանը, բրիգադիւրների աշխատանքի
վերակը և կատարած աշխատանքի արտադրա-
կան արժեքը: Հանրագումարի բերված փորձը
հիմնալի նյութ է նման բրիգադների աշխա-
տանքի համար ամբողջ շրջանում և հատկա-
պես՝ բրիգադիւրների աշխատանքը բարելավե-
լու համար:

ԿՈՒՆՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊԻԶՆԵՐԸ

Վերջապես կուլտ-մասսայական աշխա-
տանքի կազմակերպիչները ջոկատներում (զը-
վարճարարները, պատմողները) :

Շատ ջոկատներում (վոչ առանց կոլվար-
ների ու շրջանային բյուրոների մասնակցու-
թյան) գոյություն ունի այն վնասակար տե-
սակետը, թե կուլտ-մասսայական աշխատան-
քը ելական չի :

Ձի կարելի մոռանալ, վոր աշխատանքի
աճող բովանդակության և աշխատանքի կազ-
մակերպման հետ մնացող մեթոդների ու ձևե-
րի միջև «մկրատը» յեթե 90 աստիճանով չի
բացվել, ապա, համենայն դեպս, շատ հեռու
յե գոցված լինելուց, և վոր կուլտ-մասսայա-
կան աշխատանքն այժմ այն ողակն է, վորից
պետք է բռնել, վոր մորիլիդացիայի յենթարկ-
վեն գոյություն ունեցող աշխատանքի բոլոր
ձևերն ու մեթոդները, վորպեսզի ներդրավել
ջոկատային գործի ամբողջ շղթան, սպասար-
կելու անտեսա-քաղաքական խնդիրներին :

Մեծ ուշադրության արժանի յե ՊԿՇ կեն-
տրոնական տան անցկացրած կուլտ-մասսայա-
կան հրահանգի մասսայական փորձը, վորով
յերեխաները լիցք են (зарядка) ստացել
աշխատանքի ու հանգստի կուլեկտիվ ձևերի և
քաղաքական կամպանիաների հետ կապված

հաջողական հետաքրքիր աշխատանքի մատուց-
ման կազմակերպման բնագավառում :

Շրջանային բյուրոյի կողմից այդպիսի
հրահանգավորման (инструкция) անցկա-
ցումն անհրաժեշտ է ջոկատային ակտիվի հա-
մար :

Այդ ինստրուկտաժները կուլտ-մասսայա-
կան աշխատանքի առանձին տեսակների (պատ-
մողներ, յերգողներ, զվարճարարներ, կենդանի
լրագրայիններ, պարողներ) կազմակերպիչնե-
րին պետք է լիցք հաղորդեն, նրանց պետք է,
իրենց ջոկատում, ողակում աշխատելու հա-
մար աշխատանքի գրավել, հետաքրքիր և բո-
վանդակալից նոր ձևեր տալ. նրանք պետք է
հենց իրենց՝ կազմակերպիչներին սովորեցնեն
մասսավիկ դառնալ, — վոչ միայն յերգեր ու
խաղեր կազմակերպող, այլ նաև հետաքրքիր
գրույց անող և աշխատանքը գրավիչ կազմա-
կերպող :

ԱԿՏԻՎԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱՆՈՒՄ

Հիշեցեք համամիութենական պիոներական
հավաքին նախառաջող կոնֆերենցիաները. —
Պոլիտեխնիցիզմի կոնֆերենցիաները, ջոկատ-
ների և դպրոցների հացամթերմանը նվիրված
կոնֆերենցիաները և մի շարք ուրիշ պիոներա-
կան դորձնական մասսայական հավաքույթնե-
րը : Նրանց փորձը շատ ուսանելի յե :

Նրանք ցույց տվին, թե ակտիվության և

ստեղծագործութեան ինչ մեծ պաշար կա մեր
պատանեկութեան մեջ, թե ի՞նչքան արագ կեր-
պով նրանք կարող են ընդգրկել ղլխավորը,
կարող են հարցին մոտենալ «ըստ ելութեան»:

Ձի կարելի կարծել, վոր պիտներական կոն-
ֆերենցիաները, խորհրդակցութեանները,
մրցականները, փնջային հավաքութեանները—
այդ բոլորը միայն մասնայական աշխատանքի
միջոցներ են պատանեկական ակտիվի հետ:

Յե՛վ կոնֆերենցիաները, ե՛ խորհրդակցու-
թյունները, ե՛ մրցականները,—այդ բոլորը
հիմնադրի միջոցներ են փորձի փոխանակման,
ընկերական քննադատութեան, աշխատանքում
փոխադարձ ոգնութեան, վորոնք լայն հնարա-
վորութեան են տալիս հարվածայնութեան և
ոոյմրցման զարգացման կազմակերպութեան
մեջ:

Յերեսանների հետ մասնայական աշխատան-
քի այդ բոլոր ձևերը չրջբյուրոյի աշխատան-
քում մշտական տեղ պետք է գտնեն:

Նրանց անցկացումը պետք է վորոչ պլանա-
վորման յենթարկվի, թույլ չտալով այն յերե-
րուն պատահականութեանը, վորը (ճիշտ
պետք է ասել) այժմ գոյութեան ունի վորոչ
չրջաններում:

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆԵՐԸ

Ի՞նչ պետք է իրենից ներկայացնի պիոնե-
րական կոնֆերենցիան:

Կազմակերպութեան առաջ ծառացած հար-
ցերի հետ կապված, չրջբյուրոն, պետք է պար-
բերաբար փնջային կոնֆերենցիաներ հրավի-
րի, վորոնց պետք է մասնակցեն ջոկատներից,
գպրոցներից, բրիգադներից, սղակներից և
մանկատներից ընտրված պատվիրակները:

Կոնֆերենցիաները պետք է լուծեն ջոկա-
տային աշխատանքի գործնական ամենաանհե-
տաձգելի հարցեր:

Որինակի համար, մոտենում է ցանքսը:
Կոնֆերենցիա պետք է հրավիրել այն հարցի
մասին, թե փնջի (չրջանի) ջոկատներն ի՞նչպե-
տք է մասնակցեն բույլչեիկյան ցանքսին:

Կոնֆերենցիան յեւակետ ունենալով կու-
սակցութեան և կառավարութեան առաջադրած
խնդիրները, հաշվի առնելով անցյալ զարնան և
աշնան փորձը, նշում է իր փնջի էսլեկտիվ մի-
ջոցառումները, վորոչումներ է ընդունում,
վորտեղ պարպորոչ ցույց են տրվում, թե բայլ-
չեիկյան ցանքսին մասնակցելու գործում
փուլն ի՞նչ և ի՞նչպես պետք է անի:

Սյդ վորոչումները գրվում են ջոկատների
և սղակների աշխատանքի հիմքում:

Կամ թե, որինակի համար, չրջանում հա-
սունացել է պիոներական ջոկատների և գպրո-
ցական աշակերտական ինքնավարութեանների
փոխհարաբերութեան հարցը: Հրավիրվում է
ջոկատների խորհուրդների, աշկումների, սղակ-
ների և հանձնաժողովների ներկայացուցիչնե-
րի կոնֆերենցիա:

Դրովում ե վորեւե զարոցի ե ջոկատի զեկու-
ցումը, իսկ գրանից հետո յերեխաները ծախ-
ում են վիճարանությունները:

Յերեխաների ասածներից, ուրիշ ինքնա-
վարությունների ե ջոկատների աշխատանքի
փորձի փոխանակումից կոնֆերենցիան կարող
կլինի պանել աշխատանքի հիմնական թերու-
թյունները ե ցույց տալ, թե վո՛ր կողմը պետք
ե ուղղել պիտոներների ուժերը, բարելավելու
համար գարոցական ինքնավարության աշխա-
տանքները:

Կոնֆերենցիաները կարող են հրավիրվել
նմանապես վորեւե աշխատանք անցկացնելուց
հետո, այն նպատակով, վորպեսզի հանրագու-
մար կատարվի ե թույլ տված սխալները վո-
րոշվեն:

Անհրաժեշտ ե հիշել, վոր կոնֆերենցիանե-
րի իրական արժեքն այնքան ավելի բարձր կը-
լինի, վորքան յերեխաներն ավելի ակտիվ լինեն
ե վորքան մեծահասակներն ավելի լավ ներ-
գրավվեն կոնֆերենցիաների աշխատանքում:

Մեծահասակներին պատանեկական կոնֆե-
րենցիաներին ներգրավելու գործին չըջրյուրո-
ները ղեռ մինչև հիմա բավարար ուշադրու-
թյուն չեն դարձրել: Մինչդեռ փորձը ցույց ե
տվել, թե բանվորներն ու պիտոներների ծնող-
ներն ի՞նչպիսի մեծ ուշադրություն են դարձ-
նում այն հարցերին, վորոնք յերեխաների կող-
մից լուծվում են: Փորձը ցույց ե տվել, թե
կոնֆերենցիան ինչպիսի մեծ ոգուտ ե ստանում

միմիայն հարցերը մեծահասակների հետ միա-
սին քննելուց, ել չենք խոսում մեծահասակնե-
րին կոնֆերենցիայի վորոշումների կատարման
ներգրավելու ոգուտների մասին:

Խնդիրը նրանումն ե կայանում, վորպեսզի
կարողանանք յերեխաների ակտիվությունը ե
ուսեղծագործական նախաձեռնությունը միաց-
նել մեծահասակների փորձին, գիտության ե
պատրաստականությանը: Անհրաժեշտ ե մե-
ծահասակներին ներգրավել սխտեմատիկ կեր-
պով մասնակցելու յերեխաների կոնֆերենցիա-
ներին:

Մենք պատմեցինք կոնֆերենցիան անկա-
նելու մասին, սակայն ինքն իրեն հասկանալի
յե, վոր նրա հաջողությունը պայմանավորված
ե նրանով, թե ի՞նչ չափով ե կոնֆերենցիան
նա խաղատրաստոված:

Հաղվազյուտ չեն դեպքեր, յերբ կոնֆե-
րենցիան անց ե կացվում առանց այդ առթիվ
լայն նախապատրաստության, առանց պատվի-
րակներ ընտրելու ե կոնֆերենցիայի պատվի-
րակների հաշվետվություններն ել ջոկատնե-
րում չեն լավում: Այս բոլորը նվազեցնում են
կոնֆերենցիաների արժեքը:

Կոնֆերենցիայի առթիվ անհրաժեշտ ե մեծ
նախապատրաստություն ջոկատներում ե ո-
ղակներում:

Ջոկատը, ողակը նախորդ ունենալով կոն-
ֆերենցիայի որակարգը, քննում են նրա ընդու-
նելությունը ե հանձնարարում են իրենց պատ-

վերակին՝ կոնֆերենցիայում լուսարանելու
իրենց աշխատանքի հարցերը: Պատվիրակն ան-
պայմանորեն պետք է ընտրվի և անպայման
պետք է հաշվետվություն տա իր ջոկատին և
ողակին այն մասին, թե կոնֆերենցիան ի՞նչ
է վորոշել և ի՞նչ է նրա վորոշումների հիմնա-
կան խմատը:

Հաճախ կոնֆերենցիաներում ժամեր տեղ
գեկուցումներ են կարգում:

Այդպես անել, իհարկե, հարկավոր չէ, վո-
րովհետեւ, բացի վնասից, հազիվ թե մի վորեւ
բան ստացվի այդ մասխարությունից:

Կոնֆերենցիաները պետք է գումարվեն
աշխատանքի մեկ՝ միանգամայն կոնկրետ հար-
ցի շուրջը:

Այդ հարցը պետք է հետաքրքրական լինի
կոնֆերենցիայի բոլոր մասնակիցների համար,
— նրա մշտեւումը պետք է նախատեսի պատվի-
րակների ամբողջ մասսայի մասնակցությունը
քննարկությանը: Կոնֆերենցիաները պետք է
կենդանի անցկենան: Բեմադրությունները,
կոլեկտիվ սարերը, կանչերը, կոլեկտիվ ար-
տասանությունները միշտ պետք է տեղ գտնեն:

Հարկավոր է խուսափել կոնֆերենցիաները
պաշտոնական և գեղարվեստական մասերի բա-
ժանելուց: Հարցերի գործնական քննարկումը
պետք է միաձուլվի զվարճանալու հետ: Մեկը
պետք է լրացնի մյուսին, սերտ կախման մեջ
գտնվի մեկը մյուսից:

Չոկատային կենդանի լրագրերը, զվարճա-

րարները, նվագողները, պատմողները, յեր-
դողները պետք է կոնֆերենցիաներում ամենա-
աշխույժ ու ամենաջերմ մասնակցություն
ցույց տան վոչ թե միայն վորպես «զվարճա-
ցողներ», այլ և վորպես քննարկության ամե-
նաակտիվ մասնակիցներ:

Շրջրյուրները պետք է յուրացնեն, վոր
կոնֆերենցիաներն ամենուրյն աշխատանքի բա-
ղադրիչ մասն են կազմում:

ՄՐՅԱԿԱՆՁԵՐ

Աշխատանքի այս կամ այն հարցի առթիվ
ջոկատների ու դպրոցների փոխադարձ մրցա-
կանչերը մեծ դեր են խաղում: Նրանք ոգնում
են ջոկատներին ծանոթանալու մեկը մյուսի
աշխատանքին, ամրացնում են փոխադարձ
գաշնը, ոգնում են յուրացնելու այն բոլոր բաղ-
մադան գործերը, վորոնք կատարում են ջո-
կատները: Այսպես կազմակերպվում է հան-
րուաման մրցականչը:

Չոկատները գալիս են կատարած աշխա-
տանքի ռապորտով: Այստեղ կարելի չէ տեսնել
և ջոկատների մասնակցությունն անգրագետնե-
րի վիճակագրության, հետեւել, թե ինչպես ջո-
կատները սլայքարում են նորեկներին դպրոցնե-
րին ամրացնելու համար, ինչպես ոգնում են
հետամնացներին, ինչպես լիկվիդացիայի յեն
յենթարկում անչափահասների անգրագիտու-
թյունը:

Մրցականների անցկացման կենդանի ձևերը (առաջնականները, կենդանի լրագրերը, կոլեկտիվ պատմելը, զեխագրամանների ցուցակադրումը, յեղպախառն բնթերցումները), նրանց շատ հետաքրքրական են դարձնում: Այն, ինչ վոր պատմվում է մրցականների ժամանակ, յերեկաններն արագ կերպով յուրացնում են: Ձուկատների միջև, իրենց աշխատանքի ավելի արագ ու ավելի լավ կատարման պայքարում, սոցիալիստական մրցակցությունն էլ ավելի կրարձրանա, յեթե այդ աշխատանքների հանրագումարը մրցականչով ցուցադրվի ամբողջ շրջանին:

Մրցականչն ավելի արագ առաջ կշարժի ջոկատների աշխատանքը, կստիպի հեռ մնացողներին շարժվելու և կղարթեցնի քնածներին:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովորաբար խորհրդակցությունները գումարվում են ավելի քիչ և ավելի վատ, քան կոնֆերենցիաները: Մինչդեռ ակտիվիստները դեռ ու դեն են բնկնում, հաճախ անգիտությամբ, թե մի՞նչ աշխատանքը կարգի բերեն այս կամ այն կոնկրետ բնագավառում, վորի վրա նրանք աշխատում են, չիմանալով, ումնից ողնություն սպասել իրենց աշխատանքի համար:

Վերցնենք աշխատանքը պատի կամ կենդանի

